

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

18. 07. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Ժ.Ղազարյանը, Ա. Շահվերդյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Հ. Մկրտչյանը, Ն.Համբարձումյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ
Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. IFAD-ի ծրագրերի մասին
/Ա.Նալբանդյան/
2. Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին
/Ջեյ.Ն.Սարգսյան/
2. Համայնքների սեփական եկամուտների եվ առաջին կիսամյակում հողի հարկի և վարձակալական վճարների ցածր մակարդակ ապահովված համայնքների մասին
/Ջեյ.Հ.Պապոյան/
3.Առողջապահական համակարգի առաջին կիսամյակի ֆինանսական վերլուծություն
/Ջեյ. Ս/Լամբարյան/
4.Ամառային զորակոչի աշխատանքների մասին
/Ջեյ.Ա.Ղուբաթյան/
5.Առաջին կիսամյակում պետական աջակցությամբ ծրագրի շրջանակներում տրամադրված պարարտանյութերի, դիզ.վառելիքի, սերմացուների բաշխման և 2016թ. համայնքներին տրամադրվելիք աշնանացան ցորենի սերմացուի պահանջարկի մասին
/Ջեյ. Ա.Շահվերդյան/
6.Հողային հաշվեկշիռների կազմման աշխատանքների մասին
/Ջեյ.Ա.Օհանյան/
7.Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ղ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բաղդյանին, Հ. Թադևոսյանին, Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին`
IFAD – ի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել զանգվածային լրատվամիջոցներին և ստուգել ծրագրով իրականացված աշխատանքների որակը:
/Ժամկետ` 1- շաբաթ /

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին՝

Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման համեմատական վերլուծության արդյունքները տրամադրել համայնքների ղեկավարներին, անհրաժեշտ հսկողություն սահմանել հավաքագրման մակարդակի բարձրացման նկատմամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել առողջապահական հիմնարկների կողմից ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նկատմամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների կողմից պարարտանյութի համար գանձվող գումարների հավաքագրման նկատմամբ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/